

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱՂԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Երկրամասի հնագիտական հուշարձանների հնագույն խումբը պատկանում է հին քարի դարին: Մինչև այժմ հայտնաբերված քարե դործիքները՝ ձեռքի հատիչներ, քերիչներ, սրածայրեր-ցլեսպներ և զանազան կենդանիների և արդեն լայն ճանաչում գտած նեանդերթալյան մարդու ոսկորները հաստատում են, որ Ղարաբաղը նույնպես համարվում է նախամարդու բնօրաններից մեկը:

Մարդի տարբեր վայրերում գտնվող քարեդարյան ժամանակների կայաններում, Աղոխ և Անմտեղա քարանձավներում (Հաղբութի շրջան), Հունոտի և Ավանա կայաններում (Շուշվա շրջան), Սանգյարի և Ալեքսանա Ղուղուն քարայրներում (Ստեփանակերտի շրջան) և այլ քարանձավներում հայտնաբերված նյութերը՝ ցույց են տալիս, որ Արցախ-Ղարաբաղ լեռնաստանում մարդու կյանքը չի ընդհատվել, այլ վաղնջական շրջաններից հասել է մինչև նորագույն մշակույթի ձևավորումը: Այս ամբողջ ժամանակը ներկայացված է իրար հաջորդող, նյութական մշակույթին պատկանող հուշարձաններով, որոնք հնարավորություն են ընձեռում որոշակի պատկերացում կազմելու Ղարաբաղի բազմադարյան պատմության մասին:

Հին քարի դարին պատկանող քարայր-բնակավայրերից ամենաուշագրավը Աղոխ և Դրախտիկ գյուղերի միջև գտնվող՝ Անդրկովկասի ուսումնասիրված ամենամեծ քարանձավն է, որտեղ 15 տարի շարունակ պեղումներ են կատարում Ադրբեջանական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հնագիտության բաժնի գիտաշխատողները:

Աղոխի քարանձավի գաղտնիքները դարեր շարունակ անհայտ էին մնացել: Եղիշեի պատմությունից իմանում ենք, որ վարդանանց պատերազմի պարտությունից հետո հայոց բանակի և կենտրոնա-

1 Տե՛ս Միրտչյան Շ., Ուղեցույց Լեռնային Ղարաբաղի պետական պատմա-երկրագիտական թանգարանի, Ստեփանակերտ, 1969, էջ 6:

կան մարզերի հայ բնակչության մի զգալի հատված պատասպարվել է Արցախի անմատչելի լեռներում՝ այրերում, ամրոցներում ու անտառներում<sup>2</sup>։ Ութ դար հետո, թաթար-մոնղոլական արշավանքների ահավոր տարիներին, Ամարասի տերերը Ազոխի քարանձավին էին պահ տվել Արցախ նահանգի հոգևոր մշակույթի զանձերը։ Ռուս-պարսկական առաջին պատերազմի տարիներին, տակտիկական նկատառումներով, այս քաղաքում են թաքնվել Դիզակի քաջ կամավորները և այստեղից, թիկունքից, հարված հասցրել թշնամուն<sup>3</sup>։ Սակայն բոլոր դեպքերում էլ խորհրդավոր քարանձավը մնացել էր առեղծված։

Երբ հնագետներն սկսեցին հետախուզել քաղաքի հավերժական մթության դատապարտված ընդարձակ պատասպարանները, բնական «պատկերասրահները», հին դադարանքները, Անդրկովկասում նրանք առաջին անգամ գտան նախամարդու «խոհանոց»։ Հնագետներին բախտ վիճակվեց անցնել այն ուղիներով, որոնցով վերջին անգամ դուրս են եկել այդ քարանձավի հեքիաթային «պալատների» վերջին ժամապահները։ Նրանց վիճակվեց հայտնաբերել «չղջիկների պալատը», հին քարի դարի մարդու զանգի կափարիչ, այդ ժամանակվա բուսական և կենդանական աշխարհի բրածո մնացորդներ, նախամարդու արվեստի հետքեր և այլն<sup>4</sup>։

Այդ բոլորը գիտական նշանակություն ունեցող նյութեր են, որ ուսումնասիրվում, մշակվում ու ներկայացվում են՝ գիտական աշխարհին։ Ի դեպ տողերիս հեղինակին նույնպես բախտ է վիճակվել նախամարդու հետքերով շրջագայելու քաղաք-բնակավայրի անցուղիներով, տեսնել ժայռն «պալատներն» ու մենախցերը, այն էլ այժմյան էլիկտրական լույսերով ողողված։

Սկզբում, արևմտյան անցքով դեռ 10 մ շանցած անցուղին միանգամից նեղանում է, ստիպում առաջ շարժվել սողալով։ Ահա և կախարդական առաջին «տաճարը»։

Առաջին հայացքից չես հավատում աչքերիդ, մի պահ թվում է, թե ընկել ես հեքիաթային աշխարհ։ Էլիկտրական հզոր լամպերի լույսերի ծովում շողշողում են շքեղ պալատի նույնքան շքեղ բնական դարդարանքները։

<sup>2</sup> Նդիշ, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 125—127։

<sup>3</sup> Մկրտչյան Շ., նախամարդու հետքերով, «Գիտություն և տեխնիկա» № 8, 1969, էջ 36—38։

<sup>4</sup> Մկրտչյան Շ., Հին քարի դարի բնակավայր լեռնային Ղարաբաղում, «Գարուն», № 5, 1972, էջ 77—79։



Հսկա, շրջանաձև սրահը, որի լաճնությունը շուրջ 25 մ է, բարձրությունը՝ 2,5, իսկ կենտրոնական մասը՝ 10 մ, ունի խորդուբորդ հատակ։ Երևում է, որ ոչ վաղ անցյալում երկար ժամանակ զիջատիչ կենդանիներ են ելումուտ արել։ Պատերն անհարթ են, ասես կծկված օձերով ծեփված։ Այնուհետև ստալակ-տիտներն ու ստալակմիդները սառցն վիթխարի լույաների նման կախված են ծայրամասերից։ Շատ հետաքրքիր ու արտակարգ գեղեցիկ է այն ստալակտիտը, որ մի քանի մետր երկարությամբ ձգվում է հորիզոնական ուղղությամբ։

Առաջին անգամ այստեղ հայտնաբերվեցին 300 հազար տար-վա վաղնամություն ունեցող քարե գործիքների մնացորդներ, որոնք պատկանել են հին քարի դարի մարդուն։ Մա անառարկելի ապացույցն է այն բանի, որ Կովկասը եղել է նախամարդու ձև-վորման վայրերից մեկը։

Այս սրահի տարրեր մասերից սկիզբ է առնում, կամ գուցե այստեղ է վերջանում չորս անցք։ Դրանցից միայն մեկը՝ դեպի արևելք գնացողը, բարձրանում է, իսկ մնացածները իջնում են։ Մեր «ուղեկիցը»՝ 5000 մոմանոց ջահը, շրջում է դեպի արևելք, 45° թեքությամբ բարձրացող ուղին՝ «փողային անցքը»։ Մոտավորա-պես 17—20 մ մերթ աջ, մերթ ձախ անցնելով, դեմ են առնում մի ժայռի։ Այստեղ վերջանում է փողանցքի առաջին աստիճա-նը և 75° թեքությամբ սկսվում նրա երկրորդ աստիճանը։ Մեր ուղեկիցը կատակով ասաց. «Նա, ով կբարձրանա երկրորդ աստի-ճանով, կամ ետ կգանա, կամ՝ ոչ»։ Ընդհանրապես խիստ ուղղա-հայաց էր։ Յեխոտ, նեղ անցքի մեջ ընկած քարը զրևթե անան-ցանելի էր դարձնում։ Միջին նորմալից դեռ մարդիկ այստեղ ար-դեն, ինչպես ասում են, անելիք չունեն։ Դրա համար էլ զոյու-թյուն ունի առաջին պալատը, որ քարի դարում երեկ կոչվել է «գեր մարդկանց պալատ»։

Մի կերպ, կողքի պառկած, սողալով վեր բարձրացանք երկրորդ աստիճանը և դարձյալ թեքվելով աջ ու ձախ, գուրս եկանք երկրորդ սրահը։

Առաջին հերթին մեր ուշադրությունը գրավեցին անթիվ-անհա-մար շղջիկները, որոնք կծիկ կազմած մեղունների նման կուտակվել էին իրար վրա, կախվել բավականին ընդարձակ սրահի առաստա-ղին։

Սովետական Միության տերիտորիանում շղջիկների այս «շու-կան» եղակի երևույթ է։ «Ի պատիվ» շղջիկների, երկրորդ այս սրահը անվանեցինք «շղջիկների պալատ»։

«Չղջիկների պալատը» նույնպես բաղկացած էր առանձին

բազմապիսի ստալակտիտներից: Բնության անկրկնելի այս ստեղծագործությունների պատմության ակունքները կորչում են հարյուր հազարավոր տարիների խորքերում: Այն առաջացել է աստիճանաբար, ջրի զորավոր ուժի ներգործության շնորհիվ:

«Այդ վիթխարի ստալակտիտներն ու ստալագմիտները,— գրել է հնագետ Մ. Հուսեյնովը,— մեզ պատմում են ոչ միայն բնության գործողությունների, այլև բուն քարանձավի հնության մասին»<sup>5</sup>:

Ընդարձակ սրահներից մեկում հայտնաբերվել են նախամարդու աշխատանքի տարբեր գործիքներ՝ կայծքարե պրիմիտիվ սղոցներ և քերիչներ, որոնք պատրաստվել են նեանդերթալյան մարդու ձեռքով և օգտագործվել ինչպես որսի ժամանակ, այնպես էլ կենցաղում:

Մեր շուրջը վիստացող շղջիկները պարզապես հնարավորություն չտվեցին մեզ մանրամասն դիտելու սրահի ներքին բնական կահավորումը: Ուստի, հրաժեշտ տվինք «շղջիկների պալատին» և շարունակեցինք առաջ գնալ: Ճանապարհն այստեղ ուղիղ էր, նույնիսկ կարելի էր ասել բարեկարգ: Ըստ երևույթին ճանապարհի այս հատվածում մարդու ձեռքը ժամանակին իր գործը կատարել էր: 25 մ անցնելուց հետո մեր առջև բացվեց մեկ ուրիշ սրահ: Շղթաքարերով անկանոն զարդարված բարձր կամարների արանքում գոյացած անֆիլադան շատ տպավորիչ էր: Այդ վիթխարի պալատի հատակը ևս հարուստ էր զանազան վայրէջքներով, խճճված անցքերով, աստիճաններով, պատի մեջ կրակատեղերով<sup>6</sup> և պատին կպած հողե նստատեղերով: Հատակը համեմատաբար թեք էր, տեղ-տեղ կային փոքրիկ լճակներ, ուղղահայաց անցքեր, գետնից վեր բարձրացող սրածայր ստալագմիտներ: Պատերը նման են մեղրաթերթերի: Այստեղ գտնվել են կավից պատրաստված տարբեր տեսակի իրեր, հղկված քարեր, կենդանիների հարյուրավոր ոսկորներ: Ամենաուշագրավը ծղոտն անցուղին էր: Պետք է ենթադրել, որ հին ժամանակներում մարդիկ ստորգետնյա այս լաբիրինթոսը մտնելիս իրենց ետևից ծղոտ են շաղ տվել, որ ետադարձին չմոլորվեն:

Պարզվում է, որ քարայրի առաջին բնակիչների սնունդը բավական բազմազան է եղել: Նրանց խոհանոցային մնացորդների մեջ գիտնականները հաշվել են մեծ քանակությամբ կենդանիներ, որոնց ցեղատեսակները այժմ գոյություն չունեն: Աշելյան նախա-նեան-

<sup>5</sup> Հուսեյնով Մ., Հին քարի դարի առաջին բնակավայրը Լեռնային Ղարաբաղում, «Մովկտական Ղարաբաղ», № 238/6811, 11 հոկտեմբերի, 1960:

<sup>6</sup> «Правда». № 90, 31 марта, 1973 г.



դերթալցիների խնջույքասեղանին էին դրվել այնպիսի խորտիկներ, ինչպիսիք են քարանձավային արջերը, որոնք իրենց չափերով ներկայիս արջերին գերազանցում էին գրեթե երկու անգամ, երեքմետրանոց եղջյուրներ ունեցող եղջերուներ, ունդեղջյուրներ, վայրի ձիեր և բազմադան «նախաճաշիկներ», գալլեր, աղվեսներ, վայրի կատուներ...

Այդ վայրի կենդանիների ոսկորները ջարդոտված են, իսկ դրանցից շատերի վրա երևում են գործիքների հարվածի հետքեր։ Ըստ երևույթին նախնադարյան հորդաները հենց այդ ժամանակներում համոզվել էին, որ ոսկրածուծը սննդարար ուտելիք է։

Այս սրահի անկյուններում տեղ-տեղ պահպանվել են որոշ կենդանիների կոպիտ գծանկարների հետքեր, որոնք, անշուշտ, նախամարդու ձեռքի հետքերն են։

Անունների պայմանական հանգամանքներից օգտվելով, այս սրահը անվանեցինք «աշխատանքի պալատ»։ Այս «պալատից» տարբեր ուղղություներով բազմաթիվ անցքեր են եղնում։

Մայրուղուց մի քանի արահետ է սկիզբ առնում և եթե չլինեին հետազոտողների հետքերը, մարդ անպայման կմոռոլներ։ Այդ հետքերը մեզ հասցրին մի փոքր սրահ, որի մակերեսը կլինեի հազիվ 30 քառ. մ, իսկ բարձրությունը՝ 4—5 մ։ Ի տարբերություն մյուսների, սրահատակը հարթ էր, չոր, կաթոցներ գրեթե չկային, ուներ միայն մի մուտք և ամենազլխավորը՝ մարդու աշխատանքի հետքերն այստեղ շատ էին զգացվում։ Շատ հավանական է, որ այս անկյունը զաղտնարան կամ թերևս պահեստ եղած լիներ։ Այդտեղից դուրս գալով թեքվում ենք հարավ-արևմուտք։ Եվս երեսուն մետր, և հանկարծ գետնուղին վերջանում է, ու մեր աչքերը ծակծկվում անսովոր դարձած, անսպասելի ցերեկային լույսից։

Այսպիսով մենք դուրս եկանք քարայրի հարավային անցքով։ Այս անցքի բերանի մոտ, 7 մ խորության վրա մուրճի ու բրիչի օգնությամբ բնագետները և հնագետները հայտնաբերել են մուստիերյան մարդու՝ նեանդերթալցու ներքին ծնոտի մի խոշոր բեկոր, որն իր մեծությամբ ու առամների դասավորությամբ տարբերվում է ժամանակակից մարդու ծնոտից։ Մանրադնին քննությունը ցույց տվեց, որ ծնոտի վրա պահպանվել են այսպես կոչված իմաստություն, ինչպես և, երկու ուրիշ առամների մասեր։ Վարդագույն գրանիտի բեկոր հիշեցնող այդ ոչ մեծ նմուշը պահպանվում է Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում։

Ազոխի քարանձավի առաջին տիրոջ ծնոտի հայտնաբերումը, անշուշտ, գիտական մեծ նշանակություն ունեցող երևույթ է: Մինչև այդ նախամարդու մնացորդները հայտնաբերվել են չորս վայրում, ընդ որում, բոլորն էլ մեր հայրենիքի սահմաններից դուրս: Դրանք են՝ Սիդի Աբդեռահմանը (Մարոկկո), Շտեյնհեյմը (ԳՅՀ), Սփանոկոմբը (Անգլիա) և Սեդիա-դել Դիաբոլոն (Իտալիա): Լեոնային Ղարաբաղի պատմական Դիզակ գավառում հայտնաբերված նեանդերթալցու ծնոտը գիտական գրականության մեջ ստացել է 5-րդ համարը, իսկ ՍՍՀՄ-ում՝ առաջինը<sup>7</sup>: Ավելի ուշ շրջանում մուստիերյան նեանդերթալցիները տարածված են եղել շատ վայրերում և հայտնի են բազմաթիվ օրինակներով նաև ՍՍՀՄ տարածքից: Ազոխյան հայտնագործությունը հսկայական նշանակություն ունի ոչ միայն պեղածո հնագույն նեանդերթալցու ֆիզիկական կերպարի վերականգնման տեսակետից, այլև այն առումով, որ այն հաստատում է հայրենական գիտնականների համարձակ այն վարկածը, ըստ որի՝ սովետական երկիրը և առաջին հերթին Հայաստանն ու Կովկասը մտել են հնագույն մարդու գոյացման և վաղաբնակության ոլորտի մեջ<sup>8</sup>: Մեր նախապատմական Դիզակեցին, որն ապրել է սրանից մոտ 50—100 հազար տարի առաջ, կարճ ժամանակում այնպիսի մասսայականություն ձեռք բերեց, որ նրանով սկսեցին հետաքրքրվել որոշ գիտնականներ, այդ թվում նաև լենինգրադցի հայտնի պրոֆեսոր Պ. Գ. Բորիսովսկին և Ա. Ն. Փալանթանը, որոնք նրան տվեցին ազոխաբնակ անունը<sup>9</sup>:

Նկարագրված ստորգետնյա 4 սրահներից բացի, անցյալ տարի հայտնաբերվել են երկու խոշոր սրահներ ևս: Այդ խորհրդավոր քարանձավի ստորգետնյա ուղիների երկարությունը մոտավոր տվյալներով անցնում է 300 մետրից: Փարանձավում հայտնաբերված են 43 տարբեր տեսակի կենդանիների ավելի քան 20 հազար ոսկորներ, ինչպես նաև 6000 քարե գործիքներ ու այլ իրեր<sup>10</sup>:

Փարանձավում հայտնաբերվել են միջնադարյան քարակերտ շինության մնացորդներ: Բացի դրանից, բոլորովին վերջերս, քարայրից 3 կմ հարավ-արևելք, մեծ թաղարացի մարշալ Ա. Խանդիր-

7 Հաջիև Դ., Արժեքավոր հայտնագործություն, «Կոմունիստ», 1968 (Իսրու), 1 օգոստոսի, № 178 (13954):

8 Մարտիրոսյան Հ., Քարի դարից Ուրարտու, Երևան, 1971, էջ 17:

9 Տե՛ս «Գարուն», № 5, 1972, էջ 78:

10 Մկրտչյան Շ., Բնության «ճարտարապետի» հրաշալիքներ, «Սովետական Ղարաբաղ», № 64 (9406), 6 մարտի, 1959:



յանցի (Ս. Խուդյակով) անվան խաղողագործական սովխոզի Ուրուշեն կոչվող հանդամասում, 80 մ խորության վրա, հիդրոշինարարները հայտնաբերեցին բարայրից սկիզբ առնող ստորգետնյա բավականին մեծ գետ:

«Գանձերի քարանձավը» դեռ իր բոլոր դաղտներները չի բացել: Հինավուրց նախամարդու այդ խոշոր բնակավայրը, որ բազմահազար տարիների պատմություն ունի, հետազոտվում է, աստիճանաբար բացվելով և հայտնի դառնալով դիտնական աշխարհին:

\*

\* \*

Պատմա-հնագիտական հուշարձանների հաջորդ խումբը ուշ, հատկապես զարգացած բրոնզեդարյան ժամանակաշրջանին վերաբերող հուշարձաններն են, որոնցով հարուստ է Լեռնային Ղարաբաղը: Նախնադարյան հասարակության, նրա սոցիալատնտեսական և քաղաքական հարաբերությունների մասին անդնահատելի նյութեր պարունակող հնադարյան այդ հուշարձանները 19-րդ դարի 90-ական թվականներից սկսած դարձան հրկառատե ուսումնասիրությունների առարկա Շուշվա բեալական ուսումնարանի ուսուցիչ էմիլ Ռյուսլերի<sup>11</sup> և վարդապետ Խաչիկ Դադյանի համար<sup>12</sup>: Ներկամասի հնագիտական հուշարձաններով տարբեր ժամանակներ զբաղվել են նաև հնագետներ Ռ. Վերխովը<sup>13</sup>, Ա. Իվանովսկին<sup>14</sup>, Ս. Տեր-Ավետիսյանը<sup>15</sup>, Ի. Մեշչանինովը<sup>16</sup>, Յա.

<sup>11</sup> Отчеты Реслера о раскопках в Шушинском уезде, см. Отчеты арх. комиссии за 1895 г. стр. 49—51, 158—159

<sup>12</sup> Խ. Դադյանի կատարած պեղումների մասին առանձին բրոշյուր կամ թեկուզ հոդված չի տպագրվել, սակայն իր ժամանակին «Բանասեր», «Արարատ» և այլ հանդեսները, ինչպես նաև հնագետ Ս. Տեր-Ավետիսյանը անդրադարձել են Դադյանի կատարած աշխատանքներին:

<sup>13</sup> Վերխով Ռ., Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ (Քարգմ. Լ. Բարայանի, «Աղդ. հանդես», 1859 թ.):

<sup>14</sup> А. А. Ивановский, По Закавказью, МАК вып. VI, Москва, 1911 г.

<sup>15</sup> С. Тер-Аветисян, Памятники древностей Карабаха и скифская проблема, Тифлис, 1934 г.

<sup>16</sup> И. Мещанинов, Краткие сведения о работах археологических экспедиции в Нагорный Карабах и Нахкрай в 1926 г. Сообщения Гос. Академии ист. мат. Культуры, т. 1, 1927 г.

Հումմելը<sup>17</sup>, Լ. Թաշչյանը<sup>18</sup>, Կ. Քուշնարյովան<sup>19</sup>, Ն. Մինկևիչ-Մուստաֆաևան<sup>20</sup> և ուրիշներ:

Սակայն հնախույզները պեղումներ են կատարել հիմնականում մարդի կենտրոնական մասում՝ Կարկառ և Խաչեն գետերի միջին հոսանքներում՝ Առաջաձոր, Խոջալու, Ստեփանակերտ բնակավայրերի շրջակայքում, իսկ մնացած տասնյակ ոչ պակաս արժեքավոր հնավայրերը<sup>21</sup> դեռևս կարող են ուսումնասիրության:

Բրոնզեդարյան հուշարձանները դամբանաբլուրների տեսքով ամբողջական խմբերով տեղավորված են կամ գետերի հոսանքով և կամ էլ հին ճանապարհների եզրերին: Դրանց տարածման գոտին սկսվում է Ղարաբաղի դաշտավայրից (մոտավորապես այժմյան Եվլախ, Բարդա, Աղդամ, Ֆիզուլի քաղաքների հյուսիս-արևմտյան մասերից) և ձգվում դեպի Լեռնային Ղարաբաղի խորքերը, իսկ տեղ-տեղ լեռնանցքներով, Թարթառ, Խաչեն և Իշխանիկ գետերի հովիտներով՝ մեկը դեպի Սևանի ավազանը, իսկ մյուսը՝ Սյունիք<sup>22</sup>: Դամբանաբլուրների զգալի մասը գտնվում է երկրամասի նախալեռնային մասում: Այսպես, Մարդախերտ-Ստեփանակերտ ճանապարհի Բահմանլու գյուղի հատվածում կա 15 դամբանաբլուր, որոնցից 8-ը գտնվում են իրար կողքի՝ մի զծի վրա: Այդ դամբանաբլուրներից ոչ հեռու, Շահ Բուլաղ ամրոցի կամ հին արցախյան Տիգրանակերտի ավերակների մոտակայքում, ճանապարհի ուղղությամբ սկսվում են դամբանաբլուրների փոքր խմբեր, որոնք վերջանում են մի վիթխարի դամբանաբլուրով:

<sup>17</sup> Я. Гуммель, Раскопки в Нагорно-Карабахской Автономной области в 1938 г. (Известия Азерб. ФАН ССРС, 1939 г., № 4)

<sup>18</sup> Ташчян Л., Курган с массовым погребением в окрестностях Степанакерта (Известия Азерб. ФАН СССР, 1944 г. № 11).

<sup>19</sup> Кушнарева К., Памятники медного века в Нагорном Карабахе (Советская археология, XX, 1954 г.). Культúra Нагорного Карабаха по археологическим источникам (конец III-го—середина I-го тыс. до н. э.) Автореферат кандид. диссертации, 1951 г., Л-д. См. Некоторые памятники эпохи поздней бронзы в НКАО. СА, 1937, XXVII.

<sup>20</sup> Минкевич-Мустафаева Н., Об археологических находках из с. Доланлар (Сб. «Материальная культура Азербайджана», Баку, 1949 г.)

<sup>21</sup> Վերջին տարիներին հողաշինարարական աշխատանքների ծավալման հետևանքով մարդի գրեթե բոլոր գյուղերում հաճախակի են գտնվում նյութական մշակույթի բեկորներ, գիտությանն անհայտ հնավայրեր, մեծ քանակությամբ հնագիտական զանազան իրեր, որոնց մի մասը խոնամքով տեղափոխվել է մարզային Բանգարան, իսկ մի զգալի մասը պահպանվում է գյուղական դպրոցներում:

<sup>22</sup> Ս. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 9:



Դեռևս հնագիտական ուսումնասիրություն չեն ենթարկվել Արցախի ինչպես հինավուրց այս հուշարձանները, այնպես էլ բնակավայրերը, աս ենթ թեկուզ Տիգրանակերտ բնակավայրի ավերակների մնացորդները, որպեսզի հնարավոր լինե՞ր՝ դրանք եղած աղբյուրագիտական տեղեկությունների հետ համադրելու ճանապարհով, որոշակի պատկերացում կաղձն Հայոց արևելից կողմանց մի կարևոր մարդի առաջին քաղաքի հեռավոր անցյալի մասին:

Պատմագրությունից հայտնի է, որ Հայոց Տիգրան Երկրորդ թագավորը (95—55 թթ. մ.թ.ա.) իր անվամբ կառուցել է տվել շուրս քաղաք: Դրանցից ամենանշանավորը Աղձնիքում կառուցվածն էր, որը պետք է դառնար Հայաստանի քաղաքամայրը, դերադանցելով Արտաշատին, բայց ունեցավ անհաջող վախճան: Նույնա-նուն մյուս քաղաքները կառուցվեցին Արցախում, Գողթան դավա-րում և Ուտյաց աշխարհում: Ուշագրավ է, որ այս շուրս Տիգրա-նակերտներից առաջինը կառուցվել է Արցախում (90-ական թթ. մ.թ.ա.): Անշուշտ պետք է կարծել, որ Տիգրանակերտը Արցախ-Ղարաբաղի ամենահին քաղաքն է եղել: Դժբախտաբար բացի անունից մեր պատմիչները ոչինչ չեն հաղորդել Ղարաբաղի այս առաջին քաղաքի մասին, որը գոյություն է ունեցել շուրջ 1000 տա-րի: 10-րդ դարում Արցախի Տիգրանակերտն արդեն ավերակ էր<sup>23</sup>:

Ասկերանի Մայրաբերդի ստորոտի Փիփերթաձոր կամ «Ջրի ձոր» վայրը անշուք ու ամայի մի տարածություն է, ուր պտղատու ծառերի հատուկենտ մնացորդներ են մնացել: Այստեղ նկատելի չեն հին դերեղմանները, որովհետև Մայրաբերդի սարի քայքայման հետևանքով դրանց վրա բավականին հաստ հողաշերտ է գոյացել: Հետագայում սարի լանջից հոսող անձրևաջրերը քշել տարել են հողաշերտը, որի հետևանքով բացվել են դամբարաններից մի երկուսը: Կիսաբաց դամբարանում, իրարից 1—1,5 մ հեռավորության վրա, հայտնաբերվել է ոչ թե մեկ, այլ մի քանի մարդու կմախք: Աճյուն-ները ծածկված են եղել փոքր և անմշակ քարերով, իսկ դամբարանը պարունակում է բրոնզեդարի գերեղմաններին վերաբերող ոչ այնքան հարուստ նյութ: Դրանք խոջալուի և Ստեփանակերտի դամբարանաբլուրներից ստացված նյութերի հետ գտնվում են մի ընդհանուր աղբյուրի մեջ: Փիփերթաձորի հյուսիս-արևմտյան մասում, մոտավորապես 3 կմ դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Քար-

<sup>23</sup> Նաչատրյան Հ., Ղարաբաղում գտնված հին դրամի մասին, «Սովետական Ղարաբաղ», № 73, մարտի 28, 1965:

աղբյուրի (Դաշբուլաղի) Տանձուտի տեղամասում կան նույն տիպի դամբարաններ, որոնցում առաջին անգամ պատահականորեն հայտնաբերվել է բրոնզե գոտի, որի ճարմանդի կեսը իրենից ներկայացնում է ակնոցավոր օձի (պիթոնի) ձուլածո զլուխ: Ի դեպ, բոլորովին վերջերս Տանձատափի ընդարձակ դամբարանադաշտում Բալուջա բնակավայրի հյուսիսային մասում, դպրոցի շենքի համար տեղանքը հարթելիս, բացվեցին մի քանի դամբարաններ: Հայտնաբերվեցին սև փայլով կավանոթներ, բրոնզից պատրաստված՝ կախիկ-դարձեր, ուլունքներ, երկաթե նիզակի ծայր և այլ իրեր, որոնք պահվում են դպրոցում: Այդ հավաքածուի մեջ ուշագրավ նմուշներից է զարդապատկերով, բրոնզաձուլ մարդու դեմքով արձանիկը, որը գտնվում է հնասեր Յու. Ասրյանի մոտ: Զարդապատկերի ստորին մասը, կամ պոչը, կենդանակերպ է, ունի սողունի տեսք, իսկ մյուս մասը ներկայացնում է մարդու պատկեր՝ երկար մորուքով ու մաղերով: Կուռք-արձանիկը հավանաբար ունեցել է պաշտամունքային նշանակություն: Ղարաբաղի վերաբերյալ հնագիտական գրականության մեջ հայտնի են կենդանակերպ և թռչնակերպ արձանիկներ: Մարդու զարդապատկերով արձանիկ ընդհանրապես շատ քիչ է հանդիպում:

Ստեփանակերտի շրջանի Նորագյուղի տարածքում, հատկապես Խոջալուի մոտերքում, կան 13 խոշոր և 5 փոքր դամբարանաբլուրներ: Դրանցից 5-ը պեղել է Ռյուսլերը 1894 թվականին<sup>24</sup>: Խոջալուում կատարած նրա առաջին պեղումների մասին մանրամասն տեղեկություններ կան Բեռլինում վերիսով, Բաստիա և Ֆոս գիտնականների՝ մասնաժողովի խմբագրությամբ հրատարակված «Յեղագրության հանգես»-ում: Հետազոտյալ, սովետական շրջանում, Խոջալուում պեղումներ են կատարել նաև Ի. Մեշչանինովը, Կ. Քուշնարյովան և ուրիշներ:

Խոջալուն համարվում է բրոնզի դարի խոշոր կենտրոն և հնագիտությանը հայտնի է շուրջ 80 տարի:

Խոջալուն համարվում է բրոնզի դարի խոշոր կենտրոն և հնակերտի մատույցներում, տարածվում են 105 մեծ ու փոքր դամբարանների խմբեր: Այստեղ 1938—1939 թթ. պեղումներ է կատարել հայտնի հնագետ Յա. Հումմելը: Նա այդ դամբարանաբլուրներից մեկում հայտնաբերել է մի կարաս, որի մեջ կային բրոնզե 8 կա-

<sup>24</sup> Ռյուսլերն իր հայտնաբերած նյութերն ուղարկում է արտասահման, որի համար քննադատվում է և զրկվում Անդրկովկասում պեղումներ կատարելու իրավունքից:



ցին, դավադանի բրոնզե 4 զուխ, 4 բրոնզե ապարանջան, 6 կգ սարդիոնի (կիսաթանկարժեք քար) ուլունք, պաշտամունքի երկու արձանիկ և այլ առարկաներ: «Այդ առարկաների ճարտար-վեհաբանը, շինվածքը ապացույց է, որ Արցախում դոյուխյուն է ունեցել նման մասնագիտացված ու զարգացած արվեստ»<sup>25</sup>:

Կավագործ հնագույն վարպետները մշակել են յուրահատուկ մի կաղապար, որին գործվածքի օգնությամբ տվել են իրենց ցանկացած ձևը, ծեփել դրսից և ապա թրծել հնոցում: Բրուտու-լյան այդ ձևը հնագետ Վ. Վոնոգրևիկին կոչել է «Керамика с текстильными отпечатками»<sup>26</sup>:

1967 թվականի աշնանը Ստեփանակերտի հյուսիսային մասում, փողոցը բարեկարգելու ժամանակ, բացվել է դամբանադաշտ: Դամբարանները դասավորված էին մեկը մյուսից մեկ մետր հեռավորության վրա: Թաղումները կատարվել են կարասների մեջ: Դրանցից յոթը կարմիր գույնի մեծ կարասներ էին, երկուսը փոքր՝ գորշագույն: Թաղումները վերաբերում են հելլենիստական դարաշրջանին: Կարասների միջից գտնվել են տարբեր չափի բրոնզե մատանիներ, երկաթե դաշույն, երկաթե դանակ, մանյակներ, մեղաղյա զարդեր, ուլունքներ և գործվածքի մի փոքրիկ կրտոր, որն ամենահետաքրքիրն է հայտնաբերվածների մեջ:

Ի դեպ, 1965—1971 թթ. ընթացքում կարասային թաղման ձևի բաղմամբիլ դամբարաններ պատահականորեն գտնվել են Ճարտարի, Նոր-Շենի, Խանձաձորի, Կանաչ Թալայի, Մեհմանայի, Խնածախի դաշտերում:

Ստեփանակերտի շրջակայքում հայտնաբերված նյութերը ցույց են տալիս, որ դեռևս շատ հին ժամանակներում ներկայիս քաղաքի տեղում եղել է մի խոշոր բնակավայր, որի բնակիչներն ունեցել են բարձր կուլտուրա, կավից հիանալի ամաններ են շինել, բրոնզից ձուլել զենքեր ու պերճանքի առարկաներ: Ցա. Հումմելի հայտնաբերած բրոնզեդարյան հարյուրավոր նյութերը հանդիսացել են Լեռնային Ղարաբաղի պետական պատմա-երկրագիտական թանգարանի առաջին ցուցանմուշները:

Ստեփանակերտի հյուսիս-արևմտյան մասում, նախկին Կրկան գյուղի շրջակայքում, կա 27 դամբանաբլուր: Այդտեղից Կարկար գետի հոսանքն ի վեր ձանաչարհը կտրում անցնում է Լիսագորի լեռնանցքը և իջնում դեպի Զանգեզուր: Լեռնանցքի արևմտյան կող-

<sup>25</sup> Известия Азербайджанского филиала Академии наук СССР (Аз-фай), № 49, 1939.

<sup>26</sup> Նույն տեղում:

մում գտնվող Կանաչ Քալա գյուղի Տաշտահող (Դաշտահող) տեղամասում կան երկու խոշոր և 10 փոքր դամբանաբլուրներ, որոնցից մեկի մասնակի՝ պեղման ժամանակ հայտնաբերվել են կավե անոթներ, ուլունքներ, մարդու և կենդանիների ոսկորներ:

Ստեփանակերտի, Խոջալուի դամբանաբլուրների նույնատիպ խմբեր հանդիպում են Խաչեն և Քարթառ գետերի հովիտներում: Այդտեղ դամբանաբլուրները ձգվում են գետերի և նրանց վտակների ուղղությամբ, հարթավայրային մասից դեպի լեռները, ըստ որում գետերի ներքին հոսանքներում կազմում են մեծ խմբեր, իսկ լեռնային մասերում ցրված են և հաճախ հանդես են գալիս առանձին-առանձին: Դամբանաբլուրների մեծ կուտակումներ կան Առաջաձոր գյուղի հարավային մասում: Ճանապարհի երկու կողմից բարձրանում են տարբեր մեծության 10 դամբանաբլուրներ, որոնցից երեքը պեղել են Ռյոսլերն ու Խաչիկ Դադյանը, մնացած 7-ից մեկը (ուղիղ, կլոր հողաթմբի ձև ունեցողը) ունի մոտ 36 մ տրամագիծ և 6,5 մ բարձրություն: Խաչենագետի աջ ափի դամբանաբլուրների խմբերը գտնվում են Ս. Հակոբավանքից ցած, որտեղ պեղումներ է կատարել Խ. Դադյանը:

Քարթառի հովիտը հարուստ է բոլոր ժամանակաշրջանների կուտուրայի հուշարձաններով: Հնադարյան հուշարձանների շրջանակը սկսվում է Հաթերքից և շարունակվում մինչև Սարսանգ անունով հին կամուրջը (այժմ այն չկա, մնացել է Քարթառի վրա կառուցվող մեծ ջրամբարի տակ):

Ճանապարհի աջ և ձախ կողմերում նկատելի են այդ դամբանաբլուրների մի քանի խմբեր (գետի աջ ափին), որոնք զբնթի իրար կից են, իսկ մյուս ափին ցրված են լեռան լանջերին: Ջրամբարի գլխամասում, գետի երկու ափերին, կան 4-ական դամբանաբլուրներ: Քարթառի կիրճից քիչ ներքև, Մեծ Շենի տեղամասում կան դերեղմանաբլուրների նոր շարքեր: Այստեղ հին ու նոր ճանապարհն անցնում է այդ դամբանաբլուրների մոտով, մի ավերակ բնակավայրի միջով: Ինչպես դամբանաբլուրները, նույնպես և ավերակները հիմք են տալիս ենթադրելու, որ ճանապարհը հնում անցել է այնտեղով, որտեղով ձգվում է ներկայիս խճուղին. այդ է հուշում նաև Մեծ-Շենի դամբանաբլուրների խմբի առկայությունը:

Քարթառի ստորին հոսանքում, Մատաղիս բնակավայրի մոտ կա 12 դամբանաբլուր: Ներկայիս Մարդակերտի հյուսիս-արևմուտյան մասում գտնվում է դամբանաբլուրների ևս մի մեծ խումբ, որը տեղական բնակչության մեջ ճանաչված է «Կռապաշտի թումբ»



անունով: Բացի նշվածից, Մարդակերտի շրջանում դամբարանների կան նաև հետևյալ վայրերում<sup>27</sup>.

1. Զլորան գյուղի արևմտյան մասում:

2. Թճղու գյուղի հարավային մասում, նույն գյուղի Ուլուպաղի հին կամրջի շրջակայքում:

3. Խաչենագետի ձախ ափին գտնվող Մաղկաձոր հանդամասում:

4. Աղմաղու գյուղից 300—400 մ դեպի «Հլաշեն» տափը:

5. Վանք գյուղից վերև, Թանա-Օխ կոչվող տեղամասում կա 4 մետ և 18 փոքր դամբարան:

6. Թարթառի ափին, Դրմբոն գյուղի Ոլոքի-օխ տեղամասում կա 4 մետ և նրանցից ոչ հեռու՝ ես 3 դամբարան:

7. Վանք գյուղից հյուսիս, «Մեծ լանջի» հանդամասում կա 2 շատ մեծ թումբ, որոնցից մեկի լանջին կիսով չափ հողի մեջ դրված է 2,88 մ բարձրությամբ ունեցող անմշակ քար՝ առանց արձանագրության (հավանաբար մենաքար-մենհիր):

8. Նարեշտար գյուղի «Խարբան» տեղամասում կա մոտ 100 գերեզման:

9. Հաթիրքի շրջակայքում ամենուրեք՝ անտառներում, դաշտերում ես հանդիպում եմ բազմաթիվ դամբարաններ:

10. Մեհմանայում կա 8 մետ դամբարանաբլուր, 12 մանր հողաթումբ:

11. Մաղավուղի հյուսիս-արևմտյան մասում է գտնվում 4 ոչ մեծ դամբարան:

Խոջալուի և Առաջաձորի դամբարանների շարքերը մի քանի ուղղություններով տարածվում են դեպի Մարտունու և Հադրութի շրջանները: Նախալեռնային Ղղզլա գյուղի հարավային մասում, ձանապարհի երկայնքով, կողք-կողքի ձգվում են 24 փոքր գերեզմանաթմբերի նույնատիպ խմբեր: Արտաքինից քայքայված, հողմահարված դամբարանների մի շարքը գտնվում է Մարտունուց մոտավորապես 2 կմ հեռավորության վրա եղած քարհանքերի մոտերքում: Այստեղ 1957 թ. պմռանը պատահականորեն հայտնաբերվել են քարաբեկային դամբարաններ: Դամբարանների հետազոտությունը ցույց է տվել, որ դրանք ուշ բրոնզեդարյան օբյեկտներ են<sup>28</sup>:

<sup>27</sup> Մենք կազմել ենք Առնային Ղարաբաղի հնագիտական հուշարձանների քարտեզը Ստեփանակերտի մարզային թանգարանի համար:

<sup>28</sup> Խիսմզադե Օ., Հնագիտական հայտնաբերություն Մարտունու շրջանում, «Սովետական Ղարաբաղ», № 144, հունվարի 24, 1957:

Գիտական լայն շրջաններին դեռևս անհայտ է Մարտունու շրջանի Ճարտար գյուղի տարածքում, հնադարյան Ամարասից 15 կմ հարավ-արևելք, Դվին-Պարտավ պատմական ճանապարհի վրա գտնվող բրոնզեդարյան հնավայրը: 1965 թ. աշնանը պատահականորեն բացված ավելի քան 150 հեկտար տարածություն բռնող այդ խոշոր հին բնակավայրում հայտնաբերվել են շենքերի մնացորդներ, կենցաղային իրեր, ռազմական և աշխատանքային գործիքներ, որոնց մեջ աչքի են ընկնում ջարդված կամ ամբողջական վիթխարի կարասներ: Մրանց նախնական ուսումնասիրությունից գիտնականները եկել են այն եզրակացության, որ բնակավայրը, ամենայն հավանականությամբ, ավերվել է ամենաուշը առաջին հազարամյակի կեսերին (մ.թ.ա.), որովհետև ոչ օտար (հունա-հռոմեական) և ոչ էլ հայկական աղբյուրները ոչինչ չեն հաղորդում այդ մասին<sup>29</sup>:

Շուրջ 2 մ բարձրություն ունեցող վիթխարի կարասները բնիկների կավագործական արհեստի բարձր մակարդակը վկայելուց բացի, անառակելիորեն վկայում են նաև նրանց տեղերի երկրագործական և առանձնապես այգեգործական զբաղմունքների մասին: Կարասներում գտնվել են խաղողի կորիզներ և գինու քարացած մրուր:

Բազմաթիվ հնագիտական հուշարձաններ կան հինավուրց Ամարասի բարեբեր հովտում: Հազարամյակների ընթացքում քանիցս այդ բնակավայրը ենթարկվել է օտար ասպատակողների ավերածություններին և, հավանաբար, միայն պեղումները կարող են նոր տեղեկություններ ավելացնել այդ հուշարձանների մասին եղած կցկտուր փաստերին: Հովտում ստեղծված կյանքի, բնակավայրերի հարուստ մշակույթի, կենցաղի ու սովորույթների մասին շատ բան են պատմում այն գործիքների ու կենցաղային իրերի մնացորդները, որոնք գետնի երես են ելնում դաշտային կամ շինարարական աշխատանքների ընթացքում:

Ուշագրավ են հատկապես պղնձի դարին վերաբերող հարուստ նյութերը, որոնք գտնվել են այստեղ: Ի դեպ, պղնձագործությունը պատմական Արցախի նահանգում դարգացած է եղել դեռևս մ.թ.ա. երրորդ հազարամյակում: Առաջածորի, Խոջալուի, Դուլանլարի, Ամարասի, Կրկժանի բրոնզեդարյան դամբարանները պարունակում են պղնձե և բրոնզե բարձրորակ իրեր (գործիքներ, զենքեր,

<sup>29</sup> Ուլուրաբյան Բ., Արցախի պատմությունը (Քեկնածուական դիսերտացիա), Երևան, 1968, էջ 79:



զարգեր), որոնք ցույց են տալիս Ղարաբաղի հին բնակիչների մետաղածուլական արհեստի զարգացած մակարդակը<sup>30</sup>:

Դեռ 1895 թ. Ռյուսկերը պեղումներ է կատարել նաև Քյոնդալան գետի ափին՝ Ղարաբուլաղ գյուղի մոտերքում: Հսկա դամբանարևույրը, որ պեղել է նա, շրջապատված է եղել 30 փոքր դամբանարևույրների խմբերով, որոնք արտաքին տեսքով նմանվում են խոջալուի դամբանարևույրներին: Դամբանարևույրների մյուս մեծ խումբը տարածված է եղել գետի ստորին հոսանքում:

Քյոնդալան գետը բաղկացած է երկու մեծ վտակներից: Այն սկզբնավորվում է Քիրս լեռնաշղթայից և հոսում է գետի Արաքս: Գետի ափերով ձգվող դամբանարևույրները վկայում են, որ Թարթառի, խաչենի հովիտների նման, այդ հովիտը Արաքսի հարթավայրից Լեռնային Ղարաբաղ շարժվող էթնիկ խմբերի համար եղել է անցման ուղի: Այս պատկերը կրկնվում է նաև Իշխանագետ և Ինչա գետերի հովիտներում: Այստեղ դամբանարևույրների ավելի քան 200 մեծ ու փոքր խմբեր ձգվում են գետի հոսանքն ի վեր:

Ի դեպ, հնախույզ Սմբատ Տեր-Ավետիսյանը արձանագրել է Ղարաբաղյան տիպի գերեզմանարևույրների առկայությունը Սևանի ավազանում և Զանգեզուրում: «Այդ պատճառով, — գրել է նա, — ինձ թվում է, որ Սևանի գերեզմանախմբերը հանդիսանում են Ղարաբաղյան գերեզմանախմբերի շարունակությունը»<sup>31</sup>:

Իշխանագետի վերին մասում, Տումի գյուղից 4 կմ հեռու, «Հանդեր» կոչվող տեղամասը հերկելիս մեխանիզատորները պատահականորեն հայտնաբերեցին հին գերեզմաններ: Գերեզմանները դասավորված են երկու շարքով՝ ծածկված հարթ կրային թերթաքարերով, որոնցից մեկը ունի 250 սմ երկարություն: Գերեզմաններում հայտնաբերվել են մեծ քանակությամբ կավե սափորներ, ոսկորից և զանազան քարերից պատրաստված ուլունքներ, զարդաքանդակներով կոճակներ, մետաղյա ապարանջաններ, թանկարժեք եղջերաքարերից հմտորեն պատրաստված մատանի, որի հարթ մասում փորագրված է ինչ-որ միջատ: Դամբարաններում ամփոփված կմախքների (հատկապես կանանց) ուշադիր զննումից պարզվում է, որ Ղարաբաղի հնագույն բնակիչների սովորույթների որոշ մնացուկներ այժմ էլ պահպանվում են երկրամասի բնակչության կենցաղում: Այսպես, օրինակ, գլխի շուրջը

<sup>30</sup> Гуммель Я., Раскопки в НКАО в 1938 г., Известия Азербайджанского филиала Академии наук СССР, № 4, 1939.

<sup>31</sup> Ս. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 10—11:

դրամով զարդարելը, ականջներից զարդեր կախելը, հագուստի թևերի զարդարանքներն ու մետաղազարդ գոտիներ կրելը:

Հաղորովի հարավ-արևելյան մասում գտնվող դամբանաբլուրների խմբերը տեղացիները անվանում են «Կոսալաշտի հանգստարան»<sup>32</sup>: Համանման դամբարանների խմբեր են հայտնաբերվել Դուլանլար, Հարար, Արփազյատուկ գյուղերի շրջակայքում:

Լեռնային Ղարաբաղի դամբարաններն ունեն տարբեր չափեր և ձևեր: Անկասկած դրանք առաջացել են տարբեր ժամանակաշրջաններում, հազարամյակների ընթացքում: Գետի վրա հագիվ երևացող փոքր դամբարանների կողքին վեր են բարձրանում 25—60 մ բարձրությամբ հսկայական դամբանաբլուրներ: Վերջիններս իրենց հիմքում կազմում են ուղիղ շրջագիծ, գազաթել կոնաձև է կամ հարթ, երբեմն այն վերջանում է փոսիկով: Ղարաբաղում պահպանված են հատուկ տիպի դամբանաբլուրներ: Դամբարանների վրա հողաթումբ ստեղծելուց հետո այն ամրացնելու համար երեսապատել են խոշոր անտաշ քարերով: Առաջածորի հսկա քարերով երեսապատված դամբարանները նման են բուրգերի: Ինչ վերաբերում է դամբանաբլուրների ներսի կառուցումներին, ապա անհրաժեշտ է նշել, որ Ղարաբաղում կատարված պեղումների ժամանակ քիչ ուշադրություն են դարձրել դրանց վրա: Դամբարանների վրայի լիցքերը լցրել են խճաքարով, իսկ որոշ դեպքերում՝ սևահողի և խճաքարի խառնուրդով: Ինչ վերաբերում է դամբանափոսերին, դրանք շարված են կամ քարե սալիկներից կամ առանց քարի (գետնափոր են): Հաճախ էլ հանդիպում են կարասային թաղումներ:

Քարարկղաձև դամբանափոսերը ուշադրություն են դրավում իրենց ծավալով՝ լայնությամբ ու խորությամբ: Դրանք ավելի նման են քարե պատերով մեծ սենյակների, որոնց մեջ ամփոփել են ննջեցյալներին, վերջիններիս պատվին զոհաբերած կենդանիների, մետաղե իրեր և բազմաթիվ կավե ամաններ: Այս դամբարանները շատ հարուստ են բրոնզե առարկաներով, բայց քիչ չեն և երկաթե իրերը: Դրանք Ռ. Վիրխովը վերագրել է բրոնզից երկաթին անցնելու շրջանին<sup>33</sup>: Իսկ դազաղներում հանդիպում են դիակիլման հետքեր, մոխրի մնացորդներ, աննշան քանակությամբ զենքեր, բրոնզեդարյան քարե գործիքներ և համեմատաբար քիչ զարդարանքներ:

<sup>32</sup> Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис, 1888, стр. 155.

<sup>33</sup> Վիրխով Ռ., նշվ. աշխ., էջ 66:



նթե հանդուցալը հասարակական բարձր դիրք է ունեցել, դա-  
դադի վրա կառուցել են կամարաձև հատուկ դամբարան, որի  
վրա լցրել են հող, հետո քարեր շարել, նորից ծածկել հողով և  
այսպես հայն դարձել է անմատչելի բլուր: Այդ տեսակի թաղում-  
ները տարածված են եղել բրոնզի դարում:

Դամբարանաբլուրների մանրակրկիտ ուսումնասիրությունը  
միակ ուղին է այն հարցի լուծման, թե այդ հուշարձանները որ  
կուլտուրային են պատկանում, և կա՞րողյոք որևէ կապ Ղարա-  
բաղի, Սևանի և Սյունիքի դամբարանաբլուրների միջև: Այս հար-  
ցին դրական պատասխան են տվել այն բոլոր հնախույզները,  
որոնք ուսումնասիրել են Ղարաբաղում պեղած նյութերը: Օրինակ,  
ականավոր հնախույզ Բյուրը համոզված էր, որ քարակղային  
այդ դադաղները պնտկանել են հայերի նախնիներին կամ վանի  
թագավորությանը<sup>34</sup>:

Ռյուսերի և ինչիկ Դադյանի պեղումներից հայտնաբերված  
ոսկե, բրոնզե ու երկաթե իրերը, ինչպես նաև կավե ամանները  
Ս. Տեր-Ավետիսյանին հուշել են նմանության եզրեր գտնել դրանց  
ու Եփրատի և Արաքսի ավազաններում հայտնաբերված կավե  
այն ամանների միջև, որոնք աչքի են ընկնում թրծվածքի բարձր  
որակով և պատկանում են խալդական մշակույթին<sup>35</sup>:

Ղարաբաղից Գերմանիա ուղարկված հնագիտական իրերն  
անցել են Վիրխովի ձեռքը, և վերջինս եկել է այն համոզման, որ  
Կարկառ գետի ավազանի, ինչպես նաև ինչնեղեթի հովտի բնա-  
կիչներն ունեցել են բավականին զարգացած մետաղագործություն,  
կավագործական ու քանդակագործական արվեստ: Առաջածորի և  
Խոջալուի նյութերը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո Ռ. Վիր-  
խովը գրել է, որ վերոհիշյալ վայրերի դամբարանադաշտերն ու  
նրանց պարունակած իրերը մեծ նմանություն ունեն Գուգարաց  
աշխարհի, Դիլիջանի շրջակայքի ու Սևանի ավազանի դամբարան-  
ների և նրանցից պեղված նյութերի հետ: Իհարկե կան տեղական  
առանձնահատկություններ, սակայն ընդհանուր կարևորը ընդհա-  
նուր տիպն է, իսկ նմանություններն այնքան շատ են ու կոնկրետ,  
որ Վիրխովը ստիպված էր հանգելու այն եզրակացության, թե  
Գուգարքից սկսած Սևանի ավազանով մինչև Արցախի դաշտն  
ընկած տերիտորիայում ապրող մարդիկ ունեցել են մի ընդհանուր

<sup>34</sup> Ивановский А. А., По Закавказью, МАК вып. IV, Москва, 1911,

<sup>35</sup> Տեր-Ավետիսյան Ս., նշվ. աշխ., էջ 15:

ծագում, միևնույն լեզվական կազմությունը և եղել մեկ հիմնական մշակույթի ներկայացուցիչներ<sup>36</sup>:

Հետագայում այդպիսի կարծիք են հայտնել նաև գրեթե բոլոր այն գիտնականները, որոնք ոչ միայն ի մի էին բերել նախորդ պեղումների արդյունքները, այլև իրենք են պեղումներ կատարել լեռնային երկրամասում և համոզվել, որ դրանք միևնույն տիպի գամբանադաշտեր են և իրենց վրա ունեն խալդական մշակույթի դրոշմը<sup>37</sup>:

Հումմելը, Կ. Քուշնարյովան, Հ. Մնացականյանը բազմաթիվ նյութերի ուսումնասիրությամբ ցույց են տվել Ղարաբաղ լեռնատանի ու Սևանի ավազանի կուլտուրաների ընդհանրությունը: Նրանց կարծիքով, հայտնաբերված ոսկեղեն զարդարանքների և բրոնզե ու խեցեղեն իրերի պատրաստման տեխնիկայի, զեղարվեստական ձևերի համանմանությունը հուշում է, որ վերահիշյալ շրջանների բնակիչները հազարամյակներ առաջ սերտորեն կապված են եղել միմյանց հետ, ունեցել են միևնույն կենցաղը: Այդ շատ ցայտուն երևում է խեցեղեն իրերից, որոնց պատրաստման տեխնիկան հաստատում է նրանց արտադրական համանման մշակույթի մակարդակը:

Հնագետ է. Խանգադյանի կարծիքով Խաչենագետի դամբարանադաշտերը նման են Հրազդանի շրջանի Զրառատ և Սևանի ավազանի լճաշեն գյուղերում հայտնաբերվածներին<sup>38</sup>: Մոտավորապես նույն եղրակացությունն է հանգում նաև հնագետ Ս. Սարգսյանը, որի կարծիքով Խաչենագետի ու Ստեփանակերտի դամբարանաբլուրների թաղումները, ինչպես նաև հայտնաբերված սև փայլուն կավե ամաններն «իրենց վրա փորագրված հարուստ երկրաչափական նախշերով հիշեցնում են Շենգավիթի, Մոխրաբլուրի և այլ բնակավայրերում պեղված թաղումներն ու հայտնաբերված ամանեղենը»<sup>39</sup>:

«Մեծ հետաքրքրություն են ներկայացնում օբսիդիան և կալծքարե գործիքները, գնդաձև գուրդը, կացինը, պղնձե փոքր ու հարթ դանակները, դաշույնը, տեղի տերեւաձև ծայրը, գնդասեղները, օղերը, ոսկե զարդերը և այլն»<sup>40</sup>, որոնց նման իրեր ու գոր-

36 Վիլսոն Ռ., նշվ. աշխ., էջ 66:

37 Ուլուբարյան Բ., նշվ. աշխ., էջ 75:

38 Խանգադյան է., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, Երևան, 1967, էջ 24:

39 Սարգսյան Ս. Հ., Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, 1967, Երևան, էջ 180:

40 Նույն տեղում, էջ 200:



ծիրներ են հայտնաբերվել նաև Հաղուրթի շրջանի Դուլանլար գյուղի մոտ<sup>41</sup> Ամարասի հովտում, ննգի գյուղից, Սրանք պղնձե ու բրոնզե իրեր են, հիմնականում՝ կանացի զարդարանքներ:

Ինչպես հայտնի է, Անդրկովկասյան պղնձի դարը հնագետները կոչել են «Կուր-Արաքսյան էնեոլիթ»: Այս շրջանին վերաբերող հետազոտություններն ընդհանրացնելով, պետք է ասել, որ երևանում գտնվող Շենգավիթ բնակավայրի, Լեոնային Ղարաբաղի, նախիջևանի և Արաքսի ու Կուրի միջագետքի հնագույն բնակիչներն ունեցել են միանման կենցաղ ու արտադրական հարավայիններ<sup>42</sup>:

Դամբարանների ու բնակավայրերի պեղումներից հայտնաբերվել են ինչպես պղնձե, այնպես էլ երկաթե ու ոսկե անավարտ իրեր ու զործիքներ: Կ. Քուշնարյուվան ալդախի ցուցանմուշներից իրավացիորեն արել է այն հետևությունը, որ նման իրերն ու զարդարանքները պատրաստված են տեղում, ալլապես նրանց անավարտ լինելը ոչ մի բացատրություն չէր ունենա:

Այսպիսով, նշված պեղումներից ու հնագիտական նյութերից կարելի է մոտավոր գաղափար կազմել Արցախի տերիտորիայի հնագույն բնակիչների տնտեսական կյանքի, կենցաղային սովորույթների ու հավատալիքների մասին: Թվարկված գեներբի տեսակները, հասկանալի է, վկայում են նրանց ուղմական ու որսորդական կյանքի մասին: Դամբարաններում հայտնաբերվել են ցորենի հատիկներ, դեղձի ու խաղողի կորիզներ, մորու սերմեր<sup>43</sup>:

Պեղումների շնորհիվ, այդ դարաշրջանի համար բնորոշ առարկաներ երևան հանելուց բացի, մոտավոր գաղափար է կազմվել Արցախի հնագույն բնակիչների հասարակական փոխհարաբերությունների մասին: Ինչպես վերն ասացինք, պեղված դամբարաններում հայտնաբերվել են մեծ մասամբ խմբային թաղումներ:

Արցախի նախնադարյան բնակիչների կենցաղի ու հավատալիքների մասին են խոսում նաև պեղումների ժամանակ հայտնաբերված կենդանիների արձանիկներն ու քանդակները՝ առյուծի, հովաղի և ցուլերի գլուխներ, զանազան թռչունների արձանիկ:

<sup>41</sup> Սրանց նկարագրությունը տե՛ս Миккявич-Мустафаева Н. В., Об археологических находках из с. Доланлар.

<sup>42</sup> Народы Кавказа, том I, Москва, 1960, стр. 43.

<sup>43</sup> Гуммель Я., К проблеме археоботаники Закавказья, том I. Сообщения Груз. ФАН СССР, I, № 10, 1940, стр. 745.

ներ: Իսկ վերջերս գտնվեց նաև բրոնզաձուլ մարդու դեմքով արձանիկ: Ղարաբաղում թե՛ պեղումների ժամանակ և՛ թե պատահականորեն գտնված արձանիկներն ուսումնասիրելուց հետո կարելի է համարձակորեն պնդել, որ այստեղի ժողովրդի մեջ պետք է շատ մեծ հարգ վայելած լինի հովազը «Իբրև արտադրող ուժի խորհրդանիշ. սրան առընթեր, իբրև մեծ պաշտամունքի առարկա ներկայացնող աստվածություն, որին այս երկրում մի առանձին պաշտամունք էր նվիրված»<sup>44</sup>:

Ղարաբաղը նախնադարյան հասարակության ժամանակներում մեծ տեղաշարժերի վայր է եղել: Այստեղով են անցել ցեղային մեծ ու փոքր զանգվածներ՝ հյուսիսից հարավ և հարավից հյուսիս: Մեղմ կլիմայի ու բարեբեր հողի գալթակցությունն այստեղ է բերել ու իրար հետ խաշածեղ տեղական և օտար մշակույթները: Եվ արդյունքն այն է եղել, որ երկրամասը դարձել է իր ժամանակի մշակույթի առաջավոր ու զարգացած օջախներից մեկը: Արցախի տերիտորիայում գտնված հնագիտական նյութերը վկայում են, որ 7—6-րդ դդ. մ.թ.ա. Լեոնային Ղարաբաղը կապի մեջ է եղել Առաջավոր Ասիայի հարավային երկրների հետ: Խոջալուի դամբարաններից մեկում 1895 թ. էմիլ Ռյոսլերը հայտնաբերել է հսկայական մի սալաքար (կափաբիշ), որի ներսի կողմին նշմարվել են անվերձանելի գրեր:

№ 11 դամբարանում հայտնաբերվել է նաև մի ուրիշ՝ ավելի արժեքավոր առարկա՝ մի խոշոր ուլունք, որի վրա փորագրված էին սեպագիր նշաններ: 1926 թ. պրոֆեսոր Ի. Մեշչանինովը վերձանեց արձանագրությունը, կարդալով՝ «Տիեզերքի թագավոր Ադատ Նիրարու պալատը»<sup>45</sup> բառերը: Հայտնի է, որ Ադատ Նիրարը՝ Ասորեստանի թագավորը, առասպելական Շամիրամի որդին էր: Այդ ուլունքը ինչպես է բերվել Արցախ, այդ հարցին պրոֆեսոր Խաչիկ Սամվելյանը պատասխանում է այսպես. «Անշուշտ, այդ ուլունքը, իբրև ավար, Խոջալվի հին շրջանն է բերվել որևէ տեղական թագավորի կամ իշխանի ձեռքով, որը ամենայն հավանականությամբ Ադատ Նիրարի առաջին թագավորի ժամանակ մասնակցել է Ասորեստանի դեմ մղված արշավանքներից մեկին»<sup>46</sup>:

<sup>44</sup> Խաչատրյան Ն., Հայաստանի սեպագիր շրջանի պատմությունը, 1933, Երևան, էջ 446:

<sup>45</sup> Мещанинов И., Ходжанинский курган № 11 (Изв. общ-ва обследования и изучения Аз-на, 1926, № 2, Ходжанская бусина) газета «Заря Востока», 1926, № 1264.

<sup>46</sup> Սամվելյան Ն., Հին Հայաստանի կուլտուրան, Կ. Ք., Երևան, էջ 309:



Ույուսերն այդպիսի ուլունքներ էր գտել նաև Առաջաձորի պե-  
ղումներից: Այստեղ նա հայտնաբերել էր ոսկյա մի մատանի, որի  
վրա փորագրված էին առեղծվածային նշանագրեր<sup>47</sup>:

1968 թ. Մարդակերտի շրջանի Մեծ Շեն գյուղի հարավ-  
արևմտյան մասում բացվել է մի հնավայր, որտեղ գտնված բազ-  
մաթիվ հնագիտական իրերի մեջ ուշադրության արժանի է սար-  
դիոնից պատրաստված ուլունքները, որոնք գտնվում են Հայաս-  
տանի պատմության պետական թանգարանում:

Ուրեմն խոջալուի ու Առաջաձորի դամբարանները վերաբե-  
րում են ամենաքիչը մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջերին և  
առաջին հազարամյակի սկզբներին: Հետևապես նրանց մեջ  
գտնված իրերը՝ գործիքները, բարձրորակ խեցեղենն ու զենքերի  
տեսակները հազարամյակներ առաջ արտադրվել են տեղում, մի  
հանգամանք, որ հաբատապետ վկայում է տեղաբնիկների տըն-  
տեսության, կուլտուրայի բավականին բարձր մակարդակը:

Մ. Մ. ՄԿՐՏՅԱՆ

## АРХЕОЛОГИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ НАГОРНОГО

### КАРАБАХА

#### (Резюме)

В статье значительное место уделено описанию всемир-  
но-известной пещеры Азоха, ее «дворцовой архитектуры».

Основываясь на материалах, выявленных раскопками в  
Нагорном Карабахе, а также случайными раскопками при  
земляных работах, автор вводит в научный оборот десятки  
новых археологических объектов, а также новые материалы,  
представляющие большой интерес.



<sup>47</sup> Նույն տեղում, էջ 188: